# ՀՈԳԵՒՈՐ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆԵՐ

## ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ*

### ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐԸ

«Քանզի եկեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդապետութեանն ո՛չ անսայցեն.
այլ ըստ իւրաքանչի՛ւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վարդապե՛տս՝
ըստ մարմաջելոյ լսելեա՛ց իւրեանց. եւ ի ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս՝
եւ յառասպե՛լս կործանեսցին: Այլ դու՝ զուա՛րթ կաց յամենայնի, ճգնեա՛ց,
զգործս աւետարանչի գործեա. զպաշտօնդ քո կատարեալ կալ»[2]:

Ս. Երրորդության վարդապետությունը մերժելու բրուկլինյան վարդապետների ջանքերը չափ ու սահման չունեն: Հաճախ նրանք հղումներ են տալիս Եկեղեցու հայրերի գործերից՝ այնտեղից «պոկելով» որոշ հատվածներ եւ ներկայացնելով որպես ապացույց, թե նախնի Եկեղեցում եւս չեն ընդունել Ս. Երրորդության վարդապետությունը: Այս մոտեցումը զավեշտալի է, քանի որ նրանք վկայաբերում են անձերի, որոնց իրենք չեն ընդունում. նրանց թողած ժառանգությունը, որի հիման վրա էլ Եկեղեցում ձեւավորվել է Երրորդաբանական ուսմունքը, նրանք համարում են սատանայական: Կամ էլ պնդում են, թե երրորդաբանական հայացքները ընդամենը Դ. դարից հետո են ի հայտ եկել, մոռանալով, որ իրենց՝ հակաերրորդաբանական հայացքները՝ ժամանակակից ձեւակերպմամբ, ընդամենը ԺԹ. դարի ծնունդ են:

«Տերտուլիանոսը, որը մահացել է մ. թ. մոտ 230 թ-ին, սովորեցնում էր Աստծո գերիշխանության մասին: Նա նկատեց. «Հայրը տարբեր է Որդուց (ուրիշ անձ է), քանի որ ավելի մեծ է, որովհետեւ նա, ով ծնում է, ծնվածից տարբեր է. նա, ով ուղարկում է՝ ուղարկվածից տարբեր»: Նա նաեւ ասել է. «Կար ժամանակ, երբ Որդին գոյություն չուներ... Ամեն ինչից առաջ Աստված միենակ էր»[3]:

Տերտուղիանոսը լատինագիր առաջին մեծ աստվածաբանն էր: Մեծ է նրա նպաստը քրիստոնեական աստվածաբանության ձեւավորման գործում: Ստեղծել է աստվածաբանության լատիներեն տերմինաբանություն, աստվածաբանական այս կամ այն հարցի շուրջ արտահայտել բազմաթիվ արժեքավոր եւ հետաքրքիր մտքեր, իսկ Սուրբ

* Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Ժ.:

2 Բ. Տիմ. Դ. 3-5:

3 «Հարկավո՞ր է հավատալ Երրորդությանը», Դիտարան, 1995, էջ 7:

Երրորդության մասին նրա տեսությունը դարձել է հիմք՝ Ս. Երրորդության դոգմայով զբաղվող եկեղեցական հայրերի համար[4]:

Նա իրոք գրել է, որ «Հայրը լինելով ավելին, քան Որդին է, տարբերվում է նրանից, քանի որ այլ է ծնողը, այլ է՝ ուղարկողը, այլ է՝ ուղարկվողը», բայց սա ամենևին չի հակասում երրորդաբանական հայացքին, համաձայն որի Հայրը եւ Որդին տարբեր անձեր են, Հայրը ավելին է քան Որդին, ինչպես Ինքն է ասել. «որովհետեւ իմ Հայրը մեծ է, քան ես», այսինքն՝ Հայրը իշխանությամբ գերազանցում է Որդուն, սակայն էությամբ Հայրն ու Որդին հավասար են:

Բայց Տերտուղիանոսը երբեք չի ասել, որ «կար ժամանակ, երբ Որդին չկար»: Այդ խոսքերը ժամանակակից ասպվածաբան Քեյ եպիսկոպոսինն են, որոնք մեջբերված են Տերտուղիանոսի «Ընդդեմ Պրաքսեասի» աշխատության ծանոթագրություններում[5]:

Ս. Երրորդության ուսմունքը, բնականաբար, իր ուրույն հիմնավորումն ունի, եւ Եկեղեցու հայրերը այդ հարցերը քննել են պատմության գրեթե բոլոր ժամանակներում: Եւ այդ հիմնավորումների մեջ, իհարկե, կարեւոր են սուրբգրայինները, որոնք կփորձենք ներկայացնել ստորեւ.

ա. «Լսի՛ր, Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է» (Բ. Օր. Զ. 4): Եբրայերենն է՝

שְׁמַע יִשְׂרָאֵל; יְהוָה אֱלֹהֵינוּ יְהוָה אֶחָד׃

Իսկ հունարենը՝

**Ἄκουε, Ἰσραήλ· Κύριος ὁ Θεὸς ἡμῶν Κύριος εἷς ἐστι·**

Այս համարն ունի հատուկ անուն՝ Շեմա. եբրայերենում, որպես կանոն, այն բառը, որով սկսվում է նախադասությունը, համարվում է այդ նախադասության անունը, այս դեպքում՝ שְׁמַע: Նույնն է նաեւ գրքի պարագայում. գրքի անվանումը առաջին բառն է: Օրինակ Ծննդոց գիրքն սկսվում է בְּרֵאשִׁית- b-raysheeth բառով, եւ այդ բառով էլ անվանվում է Ծննդոց գիրքը: Եհովայի վկաներն ամեն անգամ Շեմային են հղում կատարում՝ պնդելով, թե այնտեղ խոսք անգամ չկա Երրորդության մասին: Սակայն հենց այդ համարն էլ հերքում է Եհովայի վկաների այդ պնդումը, եթե, իհարկե, անաչառ կերպով այն քննության ենթարկվի:

Եբրայերեն *Echod* (אֶחָד- մի) բառը նշանակում է ոչ թե բացարձակ՝ ատոմական իմաստով, համասեռ մեկություն, այլ այդ բառը Հին Կտակարանում հաճախ օգտագործվում է բաղադրյալ մեկություն արտահայտելու իմաստով, որը հաստատում է մեկ Աստծո (YHWH - יְהוָה) երրորդություն լինելու հնարավորությունը[6]: Ծննդոց Բ. 24-ում ասվում է.

«Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, եւ երկուսը պետք է լինեն **մի մարմին**»[7]:

---

4 Եզնիկ Ծ. վրդ. Պետրոսյան, Հայրաբանություն, Ս. Էջմիածին, 1996, էջ 194:

5 **Խորեն արդ. Առաքելյան**, Սուրբ Երրորդության մասին՝ «Եհովայի վկաների» ուսմունքի քննադատությունը, Ս. Էջմիածին, 2010, էջ 71-72:

6 **Walter Martin**, The Kingdom of the cults, Minneapolis, 1997, էջ 120:

7 Հունարենն է՝ **«ἕνεκεν τούτου καταλείψει ἄνθρωπος τὸν πατέρα αὐτοῦ καὶ τὴν μητέρα αὐτοῦ καὶ**

Ընդգծված հատվածում եբրայերենն օգտագործում է նույն՝ אֶחָד բառը՝ בָּשָׂר אֶחָד (Bosor Echod): Բնական է, որ դատելով վկաների նման՝ ստիպված կլինենք ընդունել, որ այրը եւ կինը միանալով դառնալու են մեկ դեմք. այդ միության մեջ նրանք մի են լինելու Աստծո առաջ: Այսինքն՝ Աստված նրանց միությունը՝ ընտանիքը դիտելու է որպես մեկություն՝ չնայած տարբեր դեմքերի: Բայց Ծննդոց գիրքը այստեղ ոչ թե համասեռ միության մասին է ակնարկում, այլ՝ բաղադրյալ, քանի որ իրականում նրանք երկու տարբեր անձեր են: Դա է אֶחָד բառի բովանդակային իմաստը:

Սուրբգրային որոշ հատվածներում այս սկզբունքն ավելի ցայտուն է երեւում: Օրինակ, երբ Մովսեսը Քանանի երկիր ուղարկեց տասներկու հետախույզների՝ երկիրը ուսումնասիրելու, նրանք վերադառնալիս իրենց հետ բերեցին «խաղողի **որթատունկ** ունեցող **մի ճյուղ**»[8]: Եբրայերենում այստեղ ընդգծված հատվածում հանդիպում ենք אֶשְׁכּוֹל אֶחָד(Echol Echod), նույն אֶחָד բառին: Պարզ է, որ խաղողի որթի վրա բազմաթիվ հատիկներ կան, եւ բոլորը միասին **մի** ճյուղ են, այսինքն այդ միությունը բաղադրյալ է եւ ոչ թե համասեռ: Ուստի այստեղ օգտագործված «אֶחָד- մի» բառը ուղղակի նշանակում է միեւնույն ծագումն ունեցող տարբեր հատիկների միություն:

բ. Ծննդոցի առաջին համարում՝ «Սկզբում Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը», կարելի է տեսնել երրորդաբանական ուսմունքի մի վկայություն եւս: Եբրայերենն ունի հետեւյալ տեսքը.

בְּרֵאשִׁית בָּרָא אֱלֹהִים אֵת הַשָּׁמַיִם וְאֵת הָאָרֶץ :

Այստեղ «Աստված ստեղծեց» հատվածն է՝ «בָּרָא אֱלֹהִים» /barah elohim/, ուր ենթական՝ אֱלֹהִים - Աստված, բառը հոգնակի թվով է՝ եբրայերեն՝ im=ներ վերջածանցով: Բայց ստորոգյալը՝ בָּרָא (ստեղծեց) եզակի թվով է. քանի որ ենթական հոգնակի է, իսկ ստորոգյալը՝ գործողություն ցույց տվողը՝ եզակի. նշանակում է հոգնակի մեկությունը մի է իր գործողությունների մեջ: Անշուշտ, երրորդաբանական ուսմունք չընդունողները ոչ մի կերպ չեն կարող բացատրել այդ իրողությունը: Իսկ իր մասին պատվանունով՝ հոգնակի թվով խոսելը հիմնավոր չէ, այդպիսին մարդն է, Աստված երբեք իրեն պատվանունով ներկայացնելու կարիք չունի. ընդհակառակը, Հիսուս Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ իր անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով (Փիլ. Բ. 6):

գ. Ծննդոց Ա. 26-ում Աստված ասում է. «Մարդ ստեղծենք մեր կերպարանքով եւ նմանությամբ»:

Հունարենն է. **«καὶ εἶπεν ὁ θεός Ποιήσωμεν ἄνθρωπον κατ' εἰκόνα ἡμετέραν καὶ καθ' ὁμοίωσιν»:** Եբրայերենն է. « וַיֹּאמֶר אֱלֹהִים, נַעֲשֶׂה אָדָם בְּצַלְמֵנוּ כִּדְמוּתֵנוּ » :

«Ստեղծենք» բայը այստեղ հոգնակի թվով է արտահայտված թե՛ բնագրում, թե՛ հունարենում (-**μεν** - վերջավորությամբ): Ո՞ւմ է նա դիմում: Բովանդակային առումով Աստված՝ Արարիչն այստեղ հարցն ուղղում է նրան, ով անշուշտ ունի իր պատկերն ու նմանությունը, իր էությունը, բնությունը՝ ամեն առումով: Այսինքն՝ այս երկիտսութ-

**προσκολληθήσεται πρὸς τὴν γυναῖκα αὐτοῦ, καὶ ἔσονται οἱ δύο εἰς σάρκα μίαν. »:**

8 Թվոց ԺԳ. 24:

յունը համագո՝ հավասարը հավասարի հետ է: Հակառակ դեպքում Մովսեսը չէր գրի «մեր պատկերով», այլ կգրեր՝ «իմ պատկերով»: Եւ միանգամայն կարելի է բացառել Նրա՝ Արարչի երկխոսությունը իր արարածների՝ հրեշտակների հետ: Հաջորդ համարը հիմնավոր պատասխան է տալիս. «Եւ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով, Աստծու պատկերով ստեղծեց նրան»: Համադրելով այդ երկու համարները տեսնում ենք, որ «մեր կերպարանքով» հատվածը՝ 26 համարից, նույն «Աստծու պատկեր»-ն է 27 համարում: Այսինքն՝ բաղադրյալ մեկության մեջ բոլոր անձերը Աստված են:

դ. Ս. Երրորդությունը փաստող շատ կարեւոր մի վկայություն է բերված Մաղաքիա արք. Օրմանյանի մոտ[9], ուր ներկայացված են երեք սուրբգրային վկայություններ. Եսայի Զ. 8-10, Յովհ. ԺԲ. 37-41, Գործք ԻԸ. 25-27:

«Այն տարին, երբ մեռավ Օզիա արքան, տեսա Տիրոջը, որ նստած էր բարձր ու վերացած աթոռին, իսկ տաճարը լի էր փառքով:

Եւ լսեցի Տիրոջ ձայնը, որն ասում էր. «Ո՞ւմ ուղարկեմ, եւ կամ ո՞վ կգնա այդ ժողովրդի մոտ»:

Նա ասաց. «Գնա՛ եւ հայտնիր այդ ժողովրդին. «Լսելով պիտի լսեք, բայց չիմանաք, տեսնելով պիտի տեսնեք, բայց չճանաչեք», քանզի այդ ժողովրդի սիրտը կարծրացել է, ծանր են լսում իրենց ականջներով, իրենց աչքերն էլ փակել են, որպեսզի չլինի թե երբեւէ աչքերով տեսնեն ու ականջներով լսեն, սրտով իմանան ու դարձի գան եւ ես էլ բժշկեմ նրանց» (Ես. Զ. 8-10):

«Թեպետեւ նա այնքան նշաններ էր արել նրանց առաջ, նրանք չէին հավատում նրան:

Չէին կարողանում հավատալ եւ այն բանի համար, որ Եսային վերստին ասում է. «Նրանց աչքերը կուրացրեց եւ նրանց սրտերը կարծրացրեց, որպեսզի աչքերով չտեսնեն ու սրտով չիմանան եւ դարձի չգան, ու ես նրանց չբժշկեմ»: Եսային այս ասաց, որովհետեւ տեսավ նրա փառքը եւ խոսեց նրա մասին» (Յովհ. ԺԲ. 37-41):

«... Պողոսն ասաց այս մի խոսքն էլ. «Սուրբ Հոգին Եսայի մարգարեի բերանով լավ խոսեց մեր հայրերին՝ ասելով. «Գնա ժողովրդի մոտ եւ ասա. լսելով պիտի լսեք ու չպիտի իմանաք, եւ տեսնելով պիտի տեսնեք ու չպիտի տեսնեք. որովհետեւ այդ ժողովրդի սիրտը կարծրացել է, եւ իրենց ականջներով ծանր են լսում ու իրենց աչքերը փակել են, որպեսզի երբեք աչքերով չտեսնեն ու ականջներով չլսեն եւ հոգով չիմանան եւ դարձի չգան, ու ես էլ դրանց չբժշկեմ» (Գործք ԻԸ. 25-27):

Այս երեք հատվածներում նույն աստվածային պատգամն է ասում թե՛ Եսայի մարգարեն, թե՛ Հովհաննես ավետարանիչը եւ թե՛ Պողոս առաքյալը, սակայն Եսայու մոտ այդ խոսքերը ասում է Հայր Աստված, Հովհաննեսի մոտ՝ Հիսուս, իսկ Պողոսի մոտ՝ Սուրբ Հոգին:

Այլ կերպ ասած՝ քրիստոնյաները հավատում են, որ Աստված մեկ է, «ոչ երեք

9 **Մաղաքիա արք. Օրմանեան,** Տեղիք աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1974, § 62:

աստուածք, այլ՝ մի Աստված, մի բնություն», ինչպես թելադրում է Հավատամքը, եւ այդ «մի բնությունը ունի երեք դեմք՝ Հայր, Որդի եւ Ս. Հոգի»[10]:

Միջնադարում քրիստոնյաները Երրորդությունը բացատրելու համար օգտագործում էին հետեւյալ գծանկարը, որը կոչվում էր «Հավատի վահան»[11].




Այստեղ պատկերված է Ս. Երրորդության անձերի փոխհարաբերությունները եւ կապերը, որից հետեւում է, որ

1. Հայրը Աստված է.
2. Որդին Աստված է.
3. Սուրբ Հոգին Աստված է.
4. Աստված Հայրն է.
5. Աստված Որդին է.
6. Աստված Սուրբ Հոգին է.
7. Հայրը Որդին չէ.
8. Որդին Հայրը չէ.
9. Հայրը Սուրբ Հոգին չէ.
10. Սուրբ Հոգին Հայրը չէ.
11. Որդին Սուրբ Հոգին չէ.
12. Սուրբ Հոգին Որդին չէ:

(Շարունակելի)

ՂԵՒՈՆԴ ՔԱՀԱՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

10 **Եզնիկ ծ. վրդ. Պետրոսյան**, Հայ եկեղեցու քրիստոսաբանությունը, Ս. Էջմիածին, 1995, էջ 87:

11 Լատիներեն՝ «Scutum fidei»: Ռազմական վահանի նմանությամբ այս գծանկարը կոչվել է այդպես համաձայն Եփես. Զ. 16 համարի, ուր Պողոս առաքյալը հոգեւոր զենքերից նկարագրում է հավատի վահանը: